

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиан» (образование) еженедельник 07.02.2024թ. չորեքշաբթի թիվ 6 (1135)

Համազգային

Ակադեմիական քաղաք

Սրբոց Վարդանանց

Խորհրդակցություն՝ Վարչապետի գլխավորությամբ



Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես, անկախ նրանից՝ սուր է ձեռքինդ, խաչ, բախ, թե գրիչ: Ու հայոց պատմությունն էլ եղել է ընդհանրական Ավարայր. գոյապայքար թե՛ իրական, թե՛ հոգեւոր պատերազմների մեջ՝ հանուն ինքնության, տեսակի պահպանման, հանուն համընդհանուր քաղաքակրթական զարգացման:

Ավարայրը մեր հիշողության մեջ մնացած առաջին հայրենական պատերազմն է, նաեւ՝ աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց՝ որպես հանուն հայրենիքի անձնագրողության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ. «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»,- Վարդանանց պատմիչ Եղիշեի բանաձեւ-ձեւակերպումը եղավ մեր ամենից նվիրական ասույթ-կարգախոսը:

Սուրբ Վարդանանք. այս անունով են ճանաչվում այն բոլոր նահատակները, ովքեր մարտիրոսվեցին Ավարայրի ճակատամարտում՝ 451թ., վասն Հիսուսի, վասն Հայրենյաց:

Հաճախ ենթադրվում է, թե քրիստոնեությունը ստրկության ու լոկ հնազանդության ուսմունք է: Մինչդեռ տասնյակ դարեր առաջ Վարդանանք ապացուցեցին, որ քրիստոնեությունը կոչում է սխրանքի եւ հավերժության:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերեւս առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի եւ խավարի, կյանքի եւ մահվան, հավատի եւ հավատախախտության, հայրենիքի ու ստրկացման իրարամերձ գաղափարներն էին բախվում, ուր ճշտվում էր մեկ անգամ եւս Հիսուսի՝ մեռնելով սպրելու պատգամը:

Վարդանանց սուրբ նահատակների տոնն ամեն տարի նշվում է Մեծ Պահքին նախորդող հինգշաբթի օրը: Այս տարի տոնը ոգեկոչվելու է վաղը՝ փետրվարի 8-ին:

շարունակությունը՝ էջ 10

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում ներկայացվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը:

Հանդիպմանը մասնակցել են «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող gmp International GmbH Architects and Engineers ընկերության փոխտնօրեն Թորիաս Քեյլը, պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներ:

Թորիաս Քեյլը մանրամասներ է ներկայացրել «Ակադեմիական քաղաք» ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների, շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վերաբերյալ եւ նշել, որ արդյունքում վերահաստատվել է «Ակադեմիական քաղաք»-ի տեսլականը: Նա նշել է, որ մինչեւ այս տարվա երկրորդ կիսամյակ հիմնական հայեցակարգը պատրաստ կլինի եւ ընդգծել, որ հարակից գործընթացներն արդեն իսկ կարելի է սկսել:

Հանդիպման մասնակիցները մանրամասն քննարկել են ճարտարագիտական ենթակառուցվածքներին, ճանապարհային ցանցին, լանդշաֆտին վերաբերող հարցեր: Ներկայացվել են թեմային առնչվող առաջարկություններ եւ դիտարկումներ:

Քննարկման արդյունքում Վարչապետը կոնկրետ հանձնարարականներ է տվել պատասխանատուներին՝ «Ակադեմիական քաղաք»-ի ենթակառուցվածքների ստեղծման եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ:



Ներկայացվել է գլխավոր հատակագծի նախնական տարբերակը



կան քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող գերմանական gmp International GmbH Architects and Engineers ընկերության փոխտնօրեն Թորիաս Քեյլը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկայացրած «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացմանը բուհական եւ գիտական համայնքների ակտիվ մասնակցությունը՝ նրանց կարիքները, առաջարկությունները, գաղափարները դիտարկելու եւ մշակվող նախագծում դրանք հաշվի առնելու նպատակով:

շարունակությունը՝ էջ 3

Կառավարության որոշումով

Կբարձրանա առանց ծնողական խնամքի մնացած ուսանողների կրթաթոշակը

ՀՀ կառավարության այսօրվա նիստում փոփոխություններ են լրացվում են կատարվել «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում նպաստի ձեռով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ) եւ պետական կրթաթոշակ տալու կարգը, ինչպես նաեւ նպաստի ձեռով ուսման վճարի փոխհատուցման չափը հաստատելու մասին» 2006թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման մեջ:

Ներկայում գործող իրավական ակտերով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթաթոշակի հստակ չափ սահմանված չէ: Որոշմամբ համապատասխանեցվում են գործող իրավական ակտերի դրույթները, եւ հստակեցվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթաթոշակի չափը:

շարունակությունը՝ էջ 2

Եղանակի հետ

Ձմեռ

Տարվա բոլոր եղանակներն էլ գեղեցիկ են... Չե՞ք հավատում, պոետներին հարցրեք (տե՛ս՝ էջ 8-9):

Թեեւ ցուրտ է, ձյուն ու սառույց, բայց ձմեռն էլ իր հմայքներն ունի: Եվ ոչ միայն մանուկների համար: Ձմեռը նաեւ գարնան ավետաբերն է, ու թե առատ է ձյունը, առատ է լինելու նաեւ տարվա հունձքը: Տա՛ Աստված:

Իսկ մինչ այդ... Ձմեռը նաեւ փորձություն է... Փորձություն՝ Երկրի, Ազգի ու Մարդու... Ձմեռը լինում է նաեւ քաղաքական... Տա՛ Աստված, այն չլինի տեսական, ու չուշանա Գարունը:

Կրթության առանց ծնողական խնամքի մնացած ուսանողների կրթաթոշակը

սկիզբը՝ էջ 1

Կրթաթոշակի տրամադրման քաղաքականության նոր մոտեցումներից ելնելով՝ 2023 թ. ընդունվել է ՀՀ կառավարության որոշում, որով ըստ առաջադիմության, 70-77.000 դրամ կրթաթոշակ է տրամադրվում պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով (ԲՏԾՍ ուղղությամբ մասնագիտական մանկավարժություն) սովորողներին, ինչպես նաեւ 50.000 դրամ՝ «Հաշմանդանություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքով նախատեսված ֆունկցիոնալության ծանր կամ խոր աստիճանի սահմանափակում ունեցողներին:

ՀՀ բուհերում, բացառությամբ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, կրթաթոշակի շեմ սահմանված չէ (գործում են առանձին անվանական կրթաթոշակներ): «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի ընդունման պահից (2002թ.) առանց ծնողական խնամքի մնացած երեխաները ստացել են 7500 դրամ պետական կրթաթոշակ՝ ՀՀ վարչապետի 1999թ. ապրիլի 14-ի N 217 որոշմամբ սահմանված 5000 դրամ կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

Ընդունված որոշմամբ ամրագրված դրույթները կարգավորում են բուհերում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրվող կրթաթոշակի տրամադրման գործընթացը: Մասնավորապես՝ սահմանվել է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ ՀՀ կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի N 1430-Ն որոշման 2-րդ կետով սահմանված 50 000 դրամ կրթաթոշակի 150 տոկոսի չափով մինչեւ սովորողի 23 տարին լրանալը, որը կազմում է 75 000 դրամ: Ընդ որում՝ միաժամանակ այլ պետական կրթաթոշակների հավակնելու դեպքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողը կարող է օգտվել դրանցից առավելագույն չափ ունեցող կրթաթոշակի իրավունքից, որի դեպքում եւս կիրառվում է առավելագույն չափի 150 տոկոսը:

Այս կարգավորումը թույլ է տալիս պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողներին հավակնել մինչեւ 70.000-77.000 դրամ կրթաթոշակի 150 տոկոսին (105.000-115.500):

Կարգը նախատեսված է նաեւ մինչեւ 2023-2024 ուսումնական տարին սահմանված կարգով բուհ ընդունված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողների համար, այսինքն՝ կարգավորումները տարածվելու են երիտասարդ խմբի բոլոր սովորողների վրա:

Որոշմամբ ամրագրվել է նաեւ, որ սահմանված կարգով բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով ուսումնառող այն սովորողները, որոնք զորակոչվելու պահին ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձի կարգավիճակ, ծառայության պատրաստիքի հետո մինչեւ ուսումնառության ավարտը պահպանում են համապատասխան ուսումնական հաստատությունում կրթաթոշակ ստանալու հնարավորությունը (ամգամ 23 տարին լրանալուց հետո): Նույն մոտեցումը կիրառվելու է նաեւ հղիության եւ ծննդաբերության, ինչպես նաեւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողների նկատմամբ:

Որոշումը բխում է «ՀՀ կրթության մինչեւ 2030թ. զարգացման ծրագրով» ամրագրված սկզբունքներից՝ կրթաթոշակների տրամադրման մեխանիզմների եւ կանչելու լավարկման միջոցով մատչելի եւ հասանելի կրթության ապահովում, այդ թվում՝ հասարակության խոցելի խմբերի համար, ինչը կապահովի նաեւ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի պահանջները:

Քննարկվել են համագործակցության հեռանկարները



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյան** այսօր ընդունել է ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Վիկտոր Ռիխտերի** գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև կրթության եւ մշակույթի ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացումն ու երկկողմ համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր:

Մասնավորապես անդրադարձ է կատարվել երեւանում «Գյոթե կենտրոնի» գործունեությանը, որը հանդիսանում է «Գյոթե ինստիտուտի» Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լեզվի եւ մշակույթի արտաքին ինստիտուտի գործընկերը:

ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերը շնորհակալություն է հայտնել ընդունելության եւ միջմշակութային ու կրթական համագործակցության հեռանկարների քննարկման հնարավորության համար: «Գյոթե կենտրոնի» նորանշանակ տնօրեն Յան-Թագե Քյուլինգը ներկայացրել է կենտրոնի գործունեությունը՝ մասնավորապես անդրադառնալով Հայաստանում նախատեսվող նոր նախագծերին:

Հանդիպմանը նախագահեց նաեւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Վիկտոր Ռիխտերը**՝ շնորհակալություն հայտնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյան** ղեկավարած պատվիրակությանը:

Նախարարը նախապես անդրադարձավ 2017 թվականից նաեւ միջազգային տարբեր խոշոր միջոցառումներ ենթակառուցված մշակույթի ոլորտում մեր հայ գործընկերների հետ: Այս համագործակցությունը եւս շարունակվելու է», - ասել է «Գյոթե կենտրոնի» նորանշանակ տնօրեն Յան-Թագե Քյուլինգը:

ԳԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ընդգծել է, որ երեւանում «Գյոթե կենտրոնը» կարելի է զբաղեցնում Հայաստանի կրթամշակութային կյանքում:

Նախարարը առանձնահատուկ կարեւորել է գերմանական կողմի հետ փոխհամագործակցությունը մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում:

ԳԳՄՍ նախարարը նաեւ նշել է բավականին հաջող համագործակցություն է առկա գերմանական Gerkan, Marg and Partners ճարտարապետական ընկերության հետ՝ Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախնական հայեցակարգի նախագծի իրականացման շուրջ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ երկու երկրների կառավարությունների միջեւ մշակույթի, կրթության, գիտության, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում համագործակցությանը վերաբերող մի շարք այլ հարցեր:

Երկար տարիների գործընկերություն՝ երկու երկրների միջեւ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյան** ընդունել է Հայաստանում Դազախստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Բոլատ Իմանբաեւին**:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**:

Ողջունելով դեսպանին՝ նախարար Ժաննա Անդրեասյանը կարեւորել է երկար տարիների գործընկերությունը երկու երկրների միջեւ եւ նշել, որ համագործակցության լավ փորձ է ձեւավորվել, որը զարգանալու եւ ընդլայնվելու հեռանկարներ ունի:

Դեսպան Իմանբաեւը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, հույս է հայտնել, որ երկու երկրների միջեւ ոլորտային արդյունավետ համագործակցությունը կշարունակվի նաեւ հետագայում:

Դեսպանը, մասնավորապես, կարեւորել է կրթության եւ գիտության ոլորտներում իրականացվող բարեփոխումները եւ երկկողմ կապերի զարգացումը:

Ներկայացնելով ՀՀ-ում ընթացող բարեփոխումները՝ նախարարը շեշտել է բուհերի միջազգայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաեւ կարեւորել միջբուհական համատեղ հետազոտական նախագծերը:

Ժաննա Անդրեասյանը դեսպանին տեղեկացրել է, որ երեւանի պետական համալսարանում ներդրված կրթական ծրագիրը դազախներն ուսումնասիրելու հնարավորություն է ընձեռում: Նա կարեւորել է, որ Դազախստանում մուսուլմանները հայերենի ուսուցման բուհական ծրագիր. «Կարծում եմ՝ դա երկու բուհերի միջեւ համագործակցության հրաշալի առիթ կլինի, որի



շրջանակում հնարավոր կլինի նաեւ կազմակերպել ուսանողների, ինչպես նաեւ դասախոսների փոփոխական ծրագրեր», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Կողմերը կարեւորել են նաեւ սպորտի, երիտասարդության եւ մշակույթի ոլորտներում համագործակցության հեռանկարները:

Հանդիպման ավարտին դեսպան Բոլատ Իմանբաեւը Ժաննա Անդրեասյանին նվիրել է 2023թ. նոյեմբերին հայերենով լույս տեսած «Դազախական ժողովրդական հեքիաթներ» գիրքը:



Բուհ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի աջակցությամբ

Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ եւ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում ԵՊՀ-ում ստեղծվում է «Օպտիկական միկրոհամակարգերի մշակման եւ հետազոտման գիտակրթական կենտրոն»:

Գիտաուսումնական կենտրոնը համալրված է լինելու ժամանակակից օպտիկական եւ օպտոէլեկտրոնային սարքերի միկրոմշակման, դրանց միջոցով կենսաօպտիկայի, տեղեկատվության մշակման ու հեռահաղորդակցության ոլորտներում բարձր տեխնոլոգիական միկրոհամակարգերի պատրաստման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Գիտակրթական կենտրոնում նորագույն սարքավորումների միջոցով մշակվելու են միջազգային չափորոշիչներին համապատասխան օպտիկական միկրոհամակարգեր, որոնց հիման վրա կատարվելու են նոր հետազոտություններ, որոնք նպաստելու են կրթության ու հետազոտությունների արդյունավետության բարձրացմանը:

Կենտրոնն իր գործունեությամբ խթանելու է նաեւ միջգիտակարգային համագործակցությունը, ինչպես նաեւ պատրաստելու է բարձր տեխնոլոգիաների ոլորտի արհեստավարժ մասնագետներ:


Հայաստանի բարձրագույն կրթության «Նորարարությունների մրցակցային հիմնադրամի» դրամաշնորհային ծրագրի մշտադիտարկման նպատակով բուհ են այցելել ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ներկայացուցիչները: Նրանք եղել են բուհի կողմից կենտրոնի համար նախատեսված տարածքում, որտեղ տեղադրված էր ծրագրով ձեռք բերված լաբորատոր գերժամանակակից սարքավորումների մի մասը:

Հանդիպման ընթացքում աշխատանքային խմբի անդամները դրամաշնորհային ծրագրի կառավարման անձնակազմի հետ քննարկել են ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործողությունները եւ դրանց իրականացման ընթացքը: Դրամաշնորհային ծրագրի ղեկավարը նշել է, որ ընթացքում են նոր «Օպտիկա եւ ֆոտոնիկա» մագիստրոսական ծրագրի մշակման աշխատանքները, մասնավորապես՝ համապատասխան ամբիոնները ներկայացրել են

անհրաժեշտ առարկայացանկերը: Դրամաշնորհային ծրագրի համակարգողը նաեւ ծանոթացրել է կոնսորցիումի գործընկերոջ հետ համագործակցության ընթացքին նշելով, որ ծրագրի շրջանակում համագործակցում են Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ: Նշվել է, որ միջգիտակարգային հետազոտական ուղղություններով կստեղծվի սերտ համագործակցություն կենսաբանության, քիմիա-

յի, դեղագիտության եւ այլ ոլորտների մասնագետների եւ ուսանողների հետ, իսկ հետագայում կենտրոնի մասնագետները կհամագործակցեն օտարերկրյա համալսարաններում աշխատող գործընկերների հետ՝ ձեւավորելով գիտակրթական նոր կապեր կրթության, գիտության ու արդյունաբերության ոլորտներում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Կատեղծվի «ՍՄԱՐԹԼԱԲ» կենտրոն

Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում կատեղծվի «ՍՄԱՐԹԼԱԲ» կենտրոն, որն իրականացվում է «Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման եւ կառավարման խելացի լուծումների ապահովումը եւ կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը» լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» ծրագրի շրջանակում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ ԿԾԿ ԾԻԳ-ի ներկայացուցիչներն այցելել են բուհ, որի նպատակը Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ընթացիկ ծրագրի մշտադիտարկումն էր: Ծրագրի իրականացումը մեկնարկել է 2023 թվականի հունիսին, եւ իրականացվում է Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ «Կրթության բարելավում ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում:

ԵՊՀ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում նախատեսվում է առկա լաբորատոր բազայի համալրում միջառարկայական կիրառություն ունեցող նորագույն փորձասարքերով, որը միտված է ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման եւ կառավարման համապատասխան կրթական ծրագրերի դասավանդման-ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը եւ առևտրայնացմանը, խելացի լուծումների կիրառմանը եւ բուհի ուսումնագիտական գործունեության ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը: Ծրագրի արդյունքում նախատեսվում է իրականացնել սարքերի ինտեգրացիոն (IoT) լաբորատորիայի հիմնում, համակարգային լաբորանի հիմնում՝ անհրաժեշտ ծրագրային փաթեթների ապահովմամբ, շինությունների տեղեկատվական մոդելավորման մոտեցումների ներդրում համալսարանի կրթական ծրագրերում, ուսումնամեթոդական նյութերի մշակում եւ տպագրում եւ այլն:

Այս ընթացքում ԿԳՄՍ-ի, ԿԾԿ ԾԻԳ-ի եւ բուհի ներկայացուցիչները քննարկել են դրամաշնորհային ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործողությունները եւ դրանց իրականացման ընթացքը: Մշտադիտարկման աշխատանքային խմբի անդամները եղել են բուհում առանձնացված «ՍՄԱՐԹԼԱԲ» լաբորատորիայի տարածքում: Դրամաշնորհային ծրագրի ղեկավարի հավաստմամբ իրականացվում են համակարգային տեխնիկայի եւ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման գործընթացները, մեկնարկել են մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման աշխատանքները:

«Կիրառելի BIM տեխնոլոգիաները» կատեղծվեն խելացի տվյալներ, որոնք կարող են օգտագործվել շենքի կամ ենթակառուցվածքների նախագծման, շինարարության եւ շահագործման ողջ ցիկլի ընթացքում, որը սկսվում է խելացի 3D մոդելի ստեղծումից եւ ապահովում է փաստաթղթերի կառավարում, համակարգում եւ մոդելավորում նախագծի ողջ ընթացքում: Այս մոտեցումը թույլ կտա Հայաստանի Հանրապետության կարիքների համար իրականացնել նոր գիտահետազոտական մշակումներ», - նշել է ծրագրի համակարգողը:

Հեղինակ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ներկայացվել է գլխավոր հատակագծի նախնական տարբերակը

սկիզբը՝ էջ 1

«Ակադեմիական քաղաքը Կառավարության ամենամեծ ծրագրերից է, որի նպատակն է՝ երկու բարելավվել բարձրագույն կրթության կազմակերպման, հետազոտական եւ գիտական աշխատանքների պայմանները: Այսօր արդեն ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախնական տարբերակի մշակման փուլում ենք եւ զուգահեռաբար փորձում ենք դրան համարյա բոլորակապակցի աշխատանքների շղթան», - ասել է նախարարը:

Ժամանակակից կարեւորել է աշխատանքների պլանավորումն ու դրան զուգահեռ փոփոխություններին պատրաստ լինելու ճկունությունը: «Նման մեծ ծրագրեր սկսելիս բոլոր բազմաթիվ հարցեր ենք ունենում, ինչը բնական է: Դրանք ցույց են տալիս պատասխաններ գտնելու ճանապարհները եւ օգնում, որ ավելի հստակ պատկերացնենք այն վերջնարդյունքը, որին ձգտում ենք: Ոլորտում փոփոխությունների կարիքն այսօր հրամայական է. դրանք պետք է իրականացնենք գիտակցված եւ համատեղ ուժերով: Աշխատանքը մեզնից պահանջելու է համբերատարություն, բայց արդյունքը, որը ստանալու ենք, լինելու է ավելի, քան ներդրվող ջանքերն են»:

Նախարարի խոսքով՝ ակադեմիական

քաղաքի գլխավոր հատակագծի նախագծումն իրականացվում է գերմանական gmp International GmbH Architects and Engineers ճարտարապետական ընկերության հետ համագործակցությամբ, որը ոլորտում հեղինակավոր է փորձառու կազմակերպություն է:

ԿԳՄՍ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրապետյանը հավելել է, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրին նվիրված բովանդակային քննարկումները շարունակական են լինելու: Ծրագրի շահառուների ընդլայնված շրջանակի հետ առաջին հանդիպումը հատկանշական է նրանով, որ վերաբերում է հենց գլխավոր հատակագծի նախագծի քննարկմանը, ինչը կօգնի ներկայերին ավելի լավ պատկերացում կազմել կառուցվելիք քաղաքի մասին եւ ավելի առարկայական հարցեր առաջադրել: Սարգիս Հայրապետյանի խոսքով՝ նախագծի ճարտարապետական բաղադրիչին զուգահեռ աշխատանքներ են տարվում նաեւ հողային իրավունքի հետ կապված հարցերի կարգավորման, ակադեմիական քաղաքի գործընկեր հանդիսացող միջազգային առաջատար բուհերի եւ կազմակերպությունների հետ հուշագրերի կնքման, բովանդակության մշակման, կառավարչական մոդելի մշակման եւ բուհերի խոշորացման հայեցակարգի ուղղությամբ: Հաջորդիվ gmp International GmbH

Architects and Engineers ընկերության փոխտնօրեն Թոբիաս Քեյլը ներկայերին ներկայացրել է գլխավոր հատակագծի նախնական տարբերակի մանրամասները՝ անդրադարձ կատարելով տեղադիրքի ընտրության նպատակահարմարությունը, շահառուների կարիքները վերհանելուն ուղղված հանդիպումների արդյունքներին, հայաստանյան պատմության Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած այցին եւ գերմանական համանման ծրագրերին ծանոթացմանը:

«Ծրագիրը մեծ նշանակություն կունենա ոչ միայն Երեւանի եւ շրջակա համայնքների, այլեւ ողջ հանրապետության համար՝ կարելի էր ասել, որ ծարսարապետական քաղաքից, այլեւ էական դրական ազդեցություն թողնելով երկրի ողջ ակադեմիական համակարգի վրա», - նշել է Թոբիաս Քեյլը՝ հավելելով, որ Գերմանիայի բուհերն ու գիտահետազոտական կազմակերպություններն արդեն իսկ անցել են նմանատիպ գործընթացի միջով՝ քաղաքներում ընդլայնվելու անհնարիմության պատճառով լավագույն իմաստասերները տեղափոխելով արվարձաններ:

Այնուհետեւ Թոբիաս Քեյլը մանրամասնել է նախագծահաշվարկային աշխատանքները ներկայացնելով տեղադիրքի եւ դրա ենթակառուցվածքների առավել արդ-

յունավետ օգտագործման հնարավորությունները, կառուցվելիք հիմնական մասնաշենքի, կլաստերների, մարզադաշտի, համերգասրահի, կանաչ եւ հանգստյան գոտիների, բնակելի հատվածի տեղակայման հարմարավետությունը: Ծրագրի հիմնական մարտահրավերների համատեքստում Թոբիաս Քեյլը նշել է քաղաքի բնակիչների եւ այցելուների համար տրանսպորտային հասանելիության ապահովման հիմնախնդիրը, որը պետք է ապահովի քաղաքի բնական գործունեությունը: Անդրադառնալով ծրագրի շարունակականությանը՝ Թոբիաս Քեյլը նշել է, որ ընկերության նպատակները «Ակադեմիական քաղաք» նախագիծն օրինակելի դարձնել ոչ միայն հայաստանյան, այլ միջազգային մակարդակով:

Հանդիպման վերջում ներկայերը հնարավորություն են ունեցել հղելու իրենց հուզող հարցերը եւ ստանալու պարզաբանումներ: Հարցերը վերաբերել են որոշ բուհերի եւ գիտահետազոտական կազմակերպությունների գործունեությանը, տարաբովանդակ կլաստերների եւ սպորտային ու մշակութային համալիրների մեկտեղմանը, տեղադիրքի ընտրության եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերի գնահատմանը, ծրագրի իրականացման արժեքին, ժամկետներին, բնակիչ-շահառուների նախատեսվող թվին եւ այլ խնդիրների:

Ի գիտություն

Ուսուցչի տարակարգի շնորհման գործընթացն առաջնություններում կազմակերպելու նպատակով՝ ՀՀ ԿԳՄՍ «Կրթության զարգացման և նորարարությունների հարցերի կենտրոն» հիմնադրամը մշակել է ուսուցչի տարակարգ ստանդարտ համար փաստաթղթեր ներկայացնելու ձևաչափ:

Անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչները ՀՀ ԿԳՄՍ նախարարություն փաթեթները ներկայացնելիս առաջնորդվեն ներքոնշյալ ձևաչափով:

1. Ուսուցիչը տարակարգի շնորհման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով:

2. Ուսուցիչը դիմումը լրացնելիս նշում է դպրոցի տվյալները, ինչ առարկա է դասավանդում և որ տարակարգի համար է դիմում: Դիմումի վերջում գրում է «Կից ներկայացնում եմ ուղարկվող փաստաթղթերի և նյութերի ցանկը» նախադասությունը և դրանից հետո թվարկում ներկայացվող փաստաթղթերի անվանումները:

3. Ուսուցիչը դիմումում նշում է իր անձնական տվյալները՝ հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն:

4. Տեքստային նյութերը ներկայացվում են .doc կամ .docx կամ .pdf ձևաչափով:

5. Նկարները ներկայացվում են jpeg կամ png ձևաչափով:

6. Տեսագրությունները ներկայացվում են MP4 ձևաչափով:

7. Ուսուցիչը ներկայացվող բոլոր փաստաթղթերը հավաքում է էլեկտրոնային թղթապանակներում: Յուրաքանչյուր թղթապանակ կրում է կարգի տվյալ կետի անվանումը: Այդ թղթապանակում տեղադրվում են այդ կետով պահանջվող համապատասխան նյութերը: Այլ անվանումներով թղթապանակները չեն դիտարկվելու:

8. Դիմումի անսաթվից հետո ուղարկված կամ տեղադրված փաստաթղթերը և թղթապանակները չեն ընդունվելու:

9. Դպրոցի տնօրենը ստուգում է ուսուցչի կազմած նյութերի փաթեթը, համոզվում է, որ այն կազմված է պատշաճ ձևով և նրա երաշխավորությամբ փաթեթը ուսուցչի կողմից ներկայացվում է ԿԳՄՍ: Տնօրենի այս պարտականությունը նկարագրված է ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 15-րդ ենթակետում:

Ներկայացված ձևաչափին չհամապատասխանող փաթեթները չեն դիտարկվելու և վերադարձվելու են:

Լավագույն փորձի խրախուսման ընթացակարգ

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է հանրակրթության պետական չափորոշիչի ներդրման լավագույն փորձի խրախուսման ընթացակարգը:

Նոր չափորոշիչով նախատեսվում է կրթության գործընթացի վերանայում մի շարք ուղղություններով՝ սկսած ուսումնական պլանի կազմումից մինչև նախագծային աշխատանքների իրականացում և պարտադիր խմբակների գործարկում: Այն ենթադրում է նաև դասավանդման մեթոդաբանության և կանոնակարգի ուղղորդման առաջնություն պահելով սովորողների կարողունակությունների ձևավորումը, միջառարկայական կապերի ապահովումը, ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական գործունեության խթանումը:

Չափորոշիչի ներդրման մեկնարկային փուլում կարելի է բացահայտել լավագույն փորձառությունները, լուսաբանել և տարածել դրանք՝ նպաստելով մասնակցայնության, համագործակցության և կրթության որակի արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով չափորոշիչի ներդրման պայմանավորված աշխատանքների հիմնական ուղղությունները՝ նախատեսվում է ունենալ լավագույն փորձի խրախուսման 10 անվանակարգ:

- «Չափորոշիչի ներդրմանն աջակցող լավագույն տնօրեն»,
- «Չափորոշիչի ներդրմանն աջակցող տնօրենի տեղակալի պաշտոն զբաղեցնող լավագույն տեղակալ»,
- «Լավագույն խմբակավար»:
Լավագույն ուսուցիչ՝ ըստ բնագավառների
- «Հայոց լեզու և գրականություն»

- բնագավառի լավագույն ուսուցիչ,
- «Հայրենագիտություն» բնագավառի լավագույն ուսուցիչ,
- «Օտար լեզուներ» բնագավառի լավագույն ուսուցիչ,
- «Բնագիտություն, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, Մաթեմատիկա (PS6U)» բնագավառի լավագույն ուսուցիչ,
- «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառի լավագույն ուսուցիչ,
- «Արվեստ և արհեստ» բնագավառի լավագույն ուսուցիչ,
- «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառի լավագույն ուսուցիչ:

Ըստ ընթացակարգի՝ յուրաքանչյուր ամիս մասնակիցները սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցում են համապատասխան լիազոր մարմնին՝ դիտարկման: Յուրաքանչյուր լիազոր մարմին ձևավորում է հանձնաժողով և յուրաքանչյուր անվանակարգում ընտրում երկու լավագույնների:

«Լավագույն ուսուցիչ» և «Լավագույն խմբակավար» անվանակարգերին մասնակցելու համար մասնակիցներն ուղարկում են տվյալ բնագավառի դասի կամ խմբակի տեսագրություն 10-12 րոպե տեւողությամբ, ինչպես նաև տեղեկատվություն 1-2 էջի սահմաններում՝ նշելով, թե ինչ նպատակ է դրված եղել իր առջև, ինչ խնդիրներ է լուծել, ինչ վերջնարդյունքներ է ապահովել:

«Չափորոշիչի ներդրմանն աջակցող լավագույն տնօրեն» անվանակարգին մասնակցելու համար տնօրենը ներ-

կայացնում է չափորոշիչի ներդրմանն ուղղված գործողությունների հաշվետվություն՝ 2-3 էջի սահմաններում:

«Չափորոշիչի ներդրմանն աջակցող տնօրենի տեղակալի պաշտոն զբաղեցնող լավագույն տեղակալ» անվանակարգին մասնակցելու համար տնօրենի տեղակալը ներկայացնում է չափորոշիչի ներդրմանն ուղղված գործողությունների հաշվետվություն՝ 2-3 էջի սահմաններում:

Լավագույնների ընտրության չափանիշները սահմանում է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնը: Ընտրված մասնակիցների մասին տեղեկատվությունն ուղարկվում է ԿԶՆԱԿ՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 12-րդ աշխատանքային օրը ներառյալ: ԿԶՆԱԿ-ի կողմից ընտրվում է յուրաքանչյուր անվանակարգի լավագույն մեկ մասնակից յուրաքանչյուր մարզից և փոխանցվում ԿԳՄՍ նախարարություն:

Յուրաքանչյուր մասնակից տարվա ընթացքում միայն մեկ անգամ է կարող հաղթող ճանաչվել նշված անվանակարգերից որեւէ մեկում: Ամբողջ տարվա ընթացքում լավագույն ճանաչված մասնակիցները տարվերջին մասնակցում են տարվա լավագույնների մրցանակաբաշխությանը՝ արդեն իսկ ներկայացրած ծրագրերով և տեղեկատվությամբ: Նախարարության կողմից ձևավորված հանձնաժողովի կողմից ընտրվում են յուրաքանչյուր անվանակարգի լավագույնները: Վերջինները պարգևատրվում են արժանանում են «Տարվա լավագույն» կոչմանը:

Հեղինակ՝ ԳՈՒՄԱՆՆԻՍՅԱՆ

Արտատուական հաստատություններ

Ընդլայնվել են ատեստավորման ուղղությունները

Արվեստի դպրոցների մանկավարժների և մարզադպրոցների մարզիչների կամավոր ատեստավորման հայտերի ընդունումը կմեկնարկի 2024 թվականի մարտի 15-ից:

Արտադպրոցական ծրագրեր իրականացնող կենտրոնների, այդ թվում՝ մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների մանկավարժական աշխատողներն ու մարզադպրոցների մարզիչ-մանկավարժներն իրենց ցանկությամբ կարող են հայտեր ներկայացնել և մասնակցել կամավոր ատեստավորմանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «Արտադպրոցական ծրագրեր իրականացնող կենտրոնների, այդ թվում՝ մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների մանկավարժական աշխատողների և մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների կամավոր ատեստավորման 2024 թվականի ուղղությունները հաստատելու մասին» հրամանով էականորեն ընդլայնվել են արտատուական հաստատությունների մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման ուղղությունները:

Երաժշտարվեստ

- Դասական գործիքներ և տեսություն
- Դաշնամուր (դաշնամուր),
- Լարային գործիքներ (ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս),
- Տեսություն,

- սոլֆեջո, երաժշտական գրականություն (երաժշտական բաժին),
- երաժշտական գրագիտություն (պարտվեստի, թատերարվեստի բաժին):

- Ազգային նվագարաններ
- Փողային նվագարաններ (պարկապզուկ, պիլո, զուռնա, դուդուկ, սրինգ, բլուլ, շվի),
- Լարային նվագարաններ (քանոն, սազ, թառ, ուդ, սանթուր, քամանչա, քամանի, բամբուկ),
- Դիդ (2024 թվականին թեստավորումը անցկացվելու է ազգային լարային նվագարանների հարցաշարի հիման վրա):

- Կերպարվեստ
- Կերպարվեստ 1 (կերպարվեստի հիմունքներ են նկարչություն, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա),
- Կերպարվեստ 2 (կերպարվեստի հիմունքներ են նկարչություն, քանդակ, ժեմադրություն),
- Կիրառական արվեստ (կիրառական արվեստի հիմունքներ, գորգագործություն, կարպետագործություն, գորբելեն, խեցեգործություն, ասեղնագործություն, տիկնիկագործություն):

- Մարզական ուղղություններ
- Ծանրամարտ,
- Բռնցքամարտ,
- Աթլետիկա,
- Բասկետբոլ,
- Դահուկավազք,
- Հրաձգություն,
- Սեղանի թենիս,

- Կարատե,
- Ազատ ոճի ըմբշամարտ,
- Հունահռոմեական ըմբշամարտ,
- Սամբո,
- Չյուդո:

Դիմելու կարգ

Հայտերի ընդունումը կատարվելու է էլեկտրոնային եղանակով՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի» միջոցով (at.emis.am):

Ատեստավորմանը մասնակցելու համար պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերն ու տեղեկատվությունը՝

- մանկավարժական աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը,
- ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը (մարզ, տարածաշրջան),
- ուղղությունը, որից դիմողը պատասխանում է ատեստավորմանը,
- անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը, էլեկտրոնային հասցեն, բջջային հեռախոսահամարը,
- մանկավարժական աշխատողի բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությունը հավաստող դիպլոմի պատճենը, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններում, մշակույթի տներում դասավանդող մանկավարժական աշխատողները ներկայացնում են բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությունը հավաստող կամ վերջին 5 տարում ատեստավորվող ուղղության դասավանդումը հավաստող տեղեկանքը,

- աշխատելու և այլ արտադպրոցական ուսումնական հաստատությունում համատեղությամբ աշխատելու դեպքում՝ տեղեկանք աշխատանքի վայրից:

Ատեստավորմանը կարող են մասնակցել նաև արտադպրոցական ուսումնական հաստատությունում չաշխատող, սակայն մանկավարժական աշխատողի պահանջները բավարարող անձինք, որոնք ատեստավորումը հաղթահարելու դեպքում լրավճար կարող են ստանալ որեւէ արտադպրոցական ուսումնական հաստատությունում աշխատանքի ընդունվելու օրվանից:

Անկախ դասավանդած ուղղությունների քանակից՝ մանկավարժական աշխատողը տվյալ տարում կարող է ատեստավորման հայտ ներկայացնել միայն մեկ ուղղությամբ՝ իր ընտրությամբ:


Մանկավարժական աշխատողների ատեստավորման իրականացվելու է գրավոր թեստավորման եղանակով՝ ԳՆԱԿ-ում և թեստավորման կենտրոնի կողմից:

Հավելենք նաև, որ «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը սահմանելու մասին» որոշման մեջ կատարվելու են կամավոր ատեստավորման ընթացակարգերը բարելավվող փոփոխություններ: Փոփոխված կարգը, ինչպես նաև ատեստավորման քննության թեստի ուղեցույցների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով կիրառարկվեն:

«Տիեզերագնաց» Արթուր Գրաբսկին, որ անհրաժեշտաբար դարձավ բժիշկ Արթուր Գրաբսկի

Բժշկական գիտությունների դոկտոր, Երեւանի Մխիթար Դերացու անվան պետական բժշկական համալսարանի ուրոլոգիայի եւ անդրուրոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի ուրոլոգիայի բաժանմունքի ղեկավար, 33 առողջապահության նախարարության ուրոլոգիայի գծով գլխավոր խորհրդատու, Հայկական ուրոլոգիական ընկերակցության նախագահ **Արթուր Գրաբսկի**ը հետ հարցազրույցը, կարծում ենք, կհետաքրքրի մեր բոլոր ընթերցողներին եւ հատկապես նրանց, ովքեր ընտրել են բժշկի մասնագիտությունը:

- Եթե Ձեզ խնդրեին ներկայանալ մեկ բառով՝ ով եք դուք...
 - Բժիշկ... Մեկ բառով՝ բժիշկ... առնվազն վերջին 20-25 տարում ես այդպես եմ ներկայանում:
 - Իսկ դրանից առաջ՝
 - Դրանից առաջ ծառայել եմ սովետական բանակում՝ Երկու տարի, եղել եմ ավագ... հետո սովորել եմ...
 - Դրանից էլ առաջ՝
 - Երբ ինձ հարցնում էին՝ ինչ ես ուզում դառնալ, ես ասում էի «կոսմոսավտ»... Թերեւս, սովետական շրջանի երեխաների համար դա տարածված երազանք էր... Իսկ բժիշկ դառնալու նպատակս ձեռավորվել է 6-7-րդ դասարանում: Մինչ այդ «կոսմոսավտ» էի:
 - Որտե՞ղ է անցել ձեր մանկությունը:
 - Ծնվել եմ Զավախքում, 1969 թվականին, սովորել եմ Վրաստանի Բոգրանովկայի (ներկայումս՝ Նինոծմինդա) շրջկենտրոնի ռուսական դպրոցում, ավարտել եմ գերազանցությամբ: Հետո գնացել եմ Մոսկվա՝ ընդունվելու այն բժշկական ինստիտուտը, որտեղ հայրս իր օրդինատուրան էր ավարտել: Մոսկվայի 1-ին բժշկական ինստիտուտը: Այն ժամանակ պարտադիր պայման էր 2 տարվա ստաժը: Չունենի: Մրցույթով չանցա: Գնացի բանակ: Վերադարձա, ընդունվեցի արդեն Երեւանի բժշկական ինստիտուտ...
 - Ասացի՞ք Ձեր հայրը այնտեղ էր ավարտել օրդինատուրան...
 - Այո, իմ հայրն էլ է բժիշկ, թերապետ է: Նա ընդունվել է բժշկական ինստիտուտ 16 տարեկանում: Հետո ծառայել է սովետական բանակում, ապա աշխատել Բոգրանովկայի շրջկենտրոնի հիվանդանոցում... Միակ բժիշկն էր՝ 5 հազար բնակչության համար: Հետո շրջկենտրոնի պոլիկլինիկայի վարիչն էր: 28 տարեկան էր, երբ գնաց Մոսկվա, ընդունվեց օրդինատուրա, Սեչենովի անվան հայտնի բժշկական 1-ին ինստիտուտում պաշտպանեց թեկնածուական թեզը: Ավարտելուց հետո գործուղեցին Միլիարդ: Չեմ սիրում գետի վրա ջրաշինարարական ծավալուն աշխատանքներ էին կատարվում սովետական մասնագետների կողմից, եւ հայրս այդ շինարարական հսկա տեղամասի ավագ բժիշկն էր: Երեք տարի հետո վերադարձավ: Մենք տեղափոխվեցինք Երեւան: Հետո էլ, ահա, դարձանք անկախ Հայաստանի քաղաքացի...
 - Տարիներ առաջ մենք առիթ ենք ունեցել Սկրտիչ Գրաբսկու բանաստեղծությունների մի ժողովածուի մասին գրախոսական տպագրել «Կրթություն» շաբաթաթերթում... Ձեր հայրը, նշանավոր բժիշկ լինելուց գաւտ, նաեւ սիրում է արվեստ եւ զարակամություն, բանաստեղծություններ է գրում, ունի հրատարակած գրքեր, Հայաստանի գրողների միության անդամ է:
 - Այո, Գրաբսկի ազգանունով եւ Սկրտիչ անունով բժիշկը հայ բանաստեղծ է: Երբեմն իմ մասին ասում են՝ թերեւս մաման հրեա է եւ վերցրել է մորական ազգանունը: Հէ՛, իմ մաման Անտոնյան է: Գրաբսկին պապայի ազգանունն է: Մեր նախապապը՝ լեհ ազնվական Մարտին Գրաբսկին, աբսոլյտ է Կովկաս՝ ցարական Ռուսաստանի դեմ լեհերի ազատագրական պայքարին մասնակցելու համար: Քանի որ նա ազնվականի տիտղոս ուներ, հողամաս եւ հատկացրել, տնտեսություն կազմակերպելու հնարավորություն տվել: Ամուսնացել է Շուշան անունով հայուհու հետ, եւ Զավախքում ծնվել են նրանց գավակները՝ սերնդեսերունդ լեհա-



- կան ազգանունով, բայց միայն հայ մայրերով:
- Լեհերը մեծ նշանակություն են տալիս քաղաքակրթական արժեքներին եւ հարյուրամյակներ շփվելով հայերի հետ՝ բարձր են գնահատել մեր մշակույթը... Թերեւս, պատահական չէ, որ Գրաբսկիների տոհմը Հայաստանում եւս բարեբեռ ճյուղեր ծլարձակեց:
- Հայրս հայ զարակամության սիրահար էր դեռ դպրոցական տարիներից: Ի դեպ, նրա հայերենի ուսուցիչը՝ Ներսես Սինոնյանը, դեռ ողջ է, ինձուսուհինը տարեկան է, ինձ հաճախ հարցնում է՝ հարյուրին կհասնե՞մ: Այո, ասում եմ, կհասնեմ: Հիշում եմ, թե ինչպես էր հայրս գրի առնում իր պատմական հուշերը, ապրումները... Եվ ահա, 50 տարի որպես բժիշկ աշխատելով, հրապարակ բերեց իր ժողովածուները: Երջանկահիշատակ Սերգո Երիցյանը մի առիթով Նշել էր, որ վերջին հարյուրամյակում ոչ մի հայ գրողի ստեղծագործության մեջ այդքան նոր բառեր չեն ընդգրկվել, որքան Սկրտիչ Գրաբսկու բանաստեղծություններում: Հիմա էլ 4-րդ եւ 5-րդ գրքերն է պատրաստում հրատարակության: Մեկը ռուս 150 հայտնի բանաստեղծների ստեղծագործությունների թարգմանությունների ժողովածուն է՝ հետաքրքիր մի վերնագրով՝ «Բանաստեղծություններ, որ կուզենայի ես գրած լինեի»: Մյուս ժողովածուն ավելի բարդ, փիլիսոփայական բնույթի բանաստեղծություններ է պարունակում: Փիլիսոփայությունը հորս տարերքն է: Նիցշեի, Շոպենհաուերի աշխատությունները իր սեղանի գրքերն են: Ամեն առիթով սիրում է նրանց ասույթներից մեքերումներ անել... Փառք Աստծո, պապայիս 75 ամյակն ենք արդեն Նշել: Մի քանի ամիս առաջ որոշեց անցնել վաստակած հանգստի, բայց կորուրտաբանության եւ ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի սեփականատերերը կրկին նրան հրավիրեցին աշխատանքի 75 տարեկան մարդուն կրկին վստահելով պատասխանատու պաշտոն:
- Դուք մեծ ոգեւորությամբ եք խոսում Ձեր հոր մասին, իսկ ի՞նչ մասնագետ է Ձեր մայրը:
- Մայրս էլ հայտնի գերդաստանի գավակ է՝ Գոմցյաններից: Ունի երկու մասնագիտություն՝ նախ բուժքույրական, ապա բանասիրական, ավարտել է նաեւ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, բայց միշտ աշխատել է առաջին մասնագիտությամբ: Եղել է մանկական պոլիկլինիկայի բուժքույր եւ պապայի բանաստեղծությունների առաջին ընթերցողը...
- Փաստորեն, հոգեւոր ժառանգության նման բեռով, Դուք նախապապով դատապարտված էիք դառնալու բժիշկ:
- Երբ ընդունվեցի բժշկություն էի համոզվում, ինձ հարցրին ինչու եմ ուզում դառնալ բժիշկ, եւ պատասխանիս համար մեկ միավոր ավելի նշանակեցին: Ես ասացի, որ իմ գիտակից կյանքը, ինչ հիշում եմ, անցել է բժշկական միջավայրում: Մենք ապրում էինք հենց հիվանդանոցում: Հայրիկիս կացարան էին հատկացրել հենց հիվանդանոցի շենքում. միայն մուտքերն էին տարբեր: Երբեմն հերթապահում էինք ամբողջ ընտանիքով: Երբ հայրս գնաց Մոսկվա, հատուկ կլինիկական օրդինատորի հրավերով, ամբողջ Վրաստանից այդ միակ տեղը հատկացրեցին նրան: Դե, պատկերացրեք, թե ինչ չափամիջներով պիտի ընտրեին այդ մեկին: Հետո արդեն, ինչպես ասացի, տեղափոխվեցինք Երեւան:

ավելանում: Իհարկե, բժշկի վարպետության մեծ մասը գիտելիքներն են ու փորձը, սակայն կարեւոր են նաեւ գործիքներն ու սարքերը: Ամեն մի գործիք էլ, բնականաբար, ունի իր գինը: Առեւի գումարներ են ծախսվում մի փոքրիկ սարք տիեզեր ուղարկելու համար, մի տիեզերք էլ մարդու մարմինն է, որ շարունակաբար ներդրող միջոցներ է պահանջում: Ոչ մեկը չի ցանկանա վնասվածքներով եւ արյան կորուստներով ուղեկցվող վիրահատության ենթարկվել: Եթե որեւէ մի տեղ կա ավելի անվտանգ ու ապահով եղանակ ու սարքավորում, բնականաբար մարդը ձգտում է վիրահատության ենթարկվել այդտեղ: Բարեբախտաբար, միզաքարային հիվանդությունների առումով, կարող եմ վստահ ասել, որ այսօր աշխարհում եղած բոլոր ժամանակակից մեթոդներին եւ սարքերին մենք տիրապետում ենք: Եվ ասածս վերաբերում է ոչ միայն «Իզմիրլյան» բժշկական կենտրոնին, Երեւանում կան մի քանի հիվանդություններ, որ ունեն այդ հնարավորությունները: Ի դեպ, ամերիկյան կամ եվրոպական բոլոր կլինիկաները չէ, որ ունեն նման տեխնիկական հագեցվածություն: Տարիներ շարունակ մենք ժամանակակից տեխնիկա ձեռք ենք բերել բարեբախտի շնորհիվ, սակայն այժմ արդեն ինքներս ենք պատվիրում եւ գնում անհրաժեշտ սարքավորումները: Իհարկե, տեխնիկական անընդհատ զարգացում է, օրինակ, կան «Դա Վինչի» վիրահատական ռոբոտներ, սակայն երբ անհրաժեշտ է լինում անցնել բաց վիրահատության, այստեղ արդեն ռոբոտն անգոր է, եւ անհրաժեշտ է բժշկի միջամտությունը: Եվ հաճախ բարձրակարգ շատ կլինիկաներում, թեեւ զինված ամենաարդիական սարքավորումներով, ունենում են անհրաժեշտ մասնագետների կարիք: Այս տեսակետից մեր առողջապահական համակարգը աստիճանաբար դառնում է լավագույններից մեկն աշխարհում:

- Երբ Շառլ Ազնավուրին հարցնում էին ինքը հայ է, թե ֆրանսիացի, նա պատասխանում էր՝ ես ֆրանսիացի լավ հայ եմ եւ հայ լավ ֆրանսիացի: Բժիշկ Արթուր Գրաբսկին լե՞հ է, թե՞ հայ:

- Իմ գիտակից ողջ կյանքում ես միշտ հայ եմ: Իմ սովետական անձնագրում էլ ազգության դիմաց գրված էր հայ: Ես լեհերեն անգամ խոսել չեմ կարող: Մի քանի անգամ եղել եմ Լեհաստանում, փորձել եմ գտնել բարեկամներ: Հի ստացվել է: Իհարկե, Գրաբսկիների տոհմի մասին տեղեկություններ ունեն: Օրինակ 1920-1925 թվականներին լեհաստանի վարչապետը Գրաբսկին էր: Հայտնի քաղաքական գործիչ էր նաեւ նրա եղբայրը՝ ֆինանսների նախարարը, ով ներմուծել է Լեհաստանի դրամը՝ զլոտին: Արխիվում գտել եմ նաեւ Գրաբսկիների տոհմական զինանշանը: Այսքանը: Իսկ ընդհանրապես՝ ես ավելի շատ հայ եմ, քան լեհ:

- Եվ մեծ հեղինակություն ունեցող բժիշկ:


- Տաք տարի առաջ էր: Մի հիվանդի հետ խորհրդատվություն էի անցկացնում: Մի երիտասարդ այդ պահին դուռը բացեց, նայեց ու ծածկեց: Երրորդ անգամ, որ դուռը բացեց, հարցրի ի՞նչ է պատահել: Ասաց. «Գրաբսկին Դո՛ւք եք»: «Այո»,- ասացի: «Ես օրդինատոր եմ,- ասաց երիտասարդը,- ինձ գործուղել են Ձեր մոտ»: «Բա էլ ինչն է՞ ես դուռը բացում-փակում, ներս արի»:- «Ուսանող ժամանակ անընդհատ Ձեր անունն էի լսում, ու ինձ թվում էր, թե Գրաբսկին մորուքով, սպիտակ մազերով տարեց մարդ է, ու հիմա, իմ առջեւ տեսնելով բոլորովին այլ մարդու, կակածեցի՝ արդյո՞ք սա է նշանավոր բժիշկ Գրաբսկին...»: Տարիներ են անցել, արդեն սկսել եմ սպիտակել, այնպես որ շուտով կմնանվեն այդ երեւակայական տարեց բժշկին:

Պարույր Սեակ - 100

Հայրենագության նոր որակ

սկիզբը՝ նախորդ համարում

«Մարդը ափի մեջ» շարքի 10 գործ, որ դուրս էին մնացել նախորդ հրատարակություններից, տպագրվեցին վեցհատորյակի 6-րդ հատորում: Դրանց մեջ քիչ չեն հայրենասիրական իմաստաբանությունները, ինչպես. «Սարսափում եմ վերադարձող // Քաղաքակիրթ միջնադարից» (6, 48): Ի՞նչ էր այս քաղաքակիրթ միջնադարը, եթե ոչ հոգեորություն ու հավատաքնություն, որ ազգեր էր շեղում բնականոն զարգացումից: Իսկ դրանից առաջ նախամարդու կենդանական բնագոյների ժամանակն էր, որ ընթացք տվեց 1915-ի ցեղասպանությանը: Սեակի հավատո համագանգը գործում էր նաև հայրենագության համար, ըստ որի՝ «Լավ է չունենալ կյանքում տուն ու տեղ, // Քան թե արվեստում լինել... տնօրենս»: Հայրենասիրական պոեզիայի ավանդույթները հեշտ չեն տրվում նորոգման. «Հարկ հոգեկան» շարքով Սեակը նոր խոսք ասաց նաև այստեղ: Սկսվում է «Ախ, իմ հայրենիք...» խորքային բացականչությամբ, որպեսզի ավելի նվիրումով արտահայտի վերաբերմունքը որպես հայրենիքի մարմնավորում. «Ես ոչինչ, ոչինչ չեզ տալ չեմ կարող // Ինչ էլ տամ կրկին տվածդ եմ տալիս»: Նրա մրմունջն է, «...որ չի թարգմանվում ուրիշ մի լեզվի», բնանկարի թանձր գույների երանգը, որ նշանակում է. «Ես կյանքիդ համար կյանքս չեմ տվել // Ես չեմ մասնակցել ես ոչ մի մարտիդ, // Բայց կես քայլ անգամ չեմ արել կյանքում // Որ թեզ չբերի, // Քեզ-նից սկսվում ու թեզ եմ հանգում // Շրջագծի պես...» (1, 506): Այս «Երգ եռաձայն»-ը կառուցվածքի եռաձայնությամբ հանդերձ մեներգ է՝ աղոթքի մաքրությամբ եւ հավատի շիտակությամբ:



Հայրենիքի եւ ժողովրդի միասնության բարձրագույն աստիճանը մայրենի լեզուն է: Այս տարերքն ավելի ծրագրված բացահայտվում է Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ: Մինչ «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմին հասնելը՝ 1962-ի հունվարի 29-ին եւ 31-ին գրում է «Մայրենի լեզուն» ու «Հայոց լեզուն»-ն, իսկ մինչ այդ 1961-ի սեպտեմբերին գրել էր «Խոսք հավաստիքի» ներբողը: Նպատակահարմար է երկերի այս շարքը «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմի հետ միասին քննարկել պոեմների բաժնում:

Մինչեւ «Եղիցի լույս»-ը Սեակը գրեց հայրենասիրական գործեր, որոնք 1957-1969 թթ. կամ մնացին անտիպ, կամ լույս տեսան մամուլի էջերում՝ «Հայաստան», «Մինչեւ անգամ մեր ձկները», «Քիչ ենք, բայց հայ ենք», «Վահագնից», «Հայրենիքը», «Բարի օր», «Հայրենիք»: Նախ փորձեց ժողովրդին բերել ինքնաճանաչման, բացել նրա ցավի շղթաները, որ խելագարված Կոմիտասի մորմոքն էր, նպատակը՝ ամեն քայլի դիմել՝ բարձր պահելու ազգային վտանգված արժանապատվությունը: Այն գրողը, ով դեմ էր սնապարծությանը, ահա, հանդես եկավ «Քիչ ենք, բայց հայ ենք» հրովարտակով, որի ամբողջ իմաստը ինքնաճանաչումն ու ինքնահարգանքն է: (Հիշեցնենք, որ համանման ասույթ մի քանի անգամ կիրառել է նաև Շիրազը): «Սենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում», - այսպիսի սկիզբը հերոսական շարունակություն է ենթադրում, բայց հաջորդում է ինքնաճանաչողության մի պարզ ձեւակերպում՝ «Սենք մեզ ոչ ոքից չենք գերադասում», այլ ընդամենը պիտի ընդունենք այն, ինչ պատմականորեն խորհրդանշում է մեր հայրենիքը՝ Արարատ, Սեան, Սասունցի Դավիթ, Նարեկ... Առաջին եւ երկրորդ տողերը դառնում են կրկներգ եւ խոսքասացությամբ կերպավորում հայրենիքը. «Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել, // Պարզապես շատ ենք մենք արյուն հեղել... // Պարզապես մահն էր մեզ սիրահարվել...»: Ավերումի դեմ հայոց շինարար հանձարն է, որ խոսքն ավարտում է բարձրացող

վելիս // Ավրս դնում եմ քո մի ափ հողին, // Ինչպես իմ նախնիք՝ Սուրբ Գրքին իրենց... // Եվ ափից նայում // Տեսնում եմ հրդեհ, // Չափից եմ նայում // Տեսնում եմ մոխիր... // Ճակատազրի բերումով դաժան // Ճակատորդ հիմա՝ փոքրից էլ փոքրի՛կ, // Մինչդեռ ճակատիդ գիրը՝ մեծից մե՛ծ: Իսկ ո՞վ է դրա ընթերցողն, ո՞ւր է» (6, 228-229): Սա բանաստեղծ-հայրենիք-ժողովուրդ եռամիասնության բարձրագույն աստիճանն է՝ որպես հայրենիք եւ ճակատագիր: Ամեն ինչ բարձր արվեստով է՝ այդ իսկ պատճառով ներգործող, ինչպես սրբազան երգում:

Հայրենագությունը նոր զարգացում ստացավ «Եղիցի լույս» (1969-1971) գրքում: Բանաստեղծի ազատամտությունը դեմ առավ ժամանակի գաղափարական արգելքներին, գիրքը կալանքի ենթարկվեց եւ մասնակի փոփոխություններով վաճառքի հանվեց հեղինակի զոհվելուց հետո: Եղիցի լույս... Աստվածաշնչյան այս արտահայտությամբ Սեակը լույս է երազում գաղափարական սահմանափակումների մեջ՝ գերազանցիկ լույս՝ ընդդեմ խավարի: Գիրքը բացող «Նորոյս աղոթք»-ը ոչ միայն իր բարոյական շավղից դուրս սայթաքած մարդկության համար է, այլև իր ազգային, ավանդական, ժառանգորդական հունից դուրս մետված համաշխարհաքաղաքացիկոսմադրական: Ծանր խավարն իջել է ամեն ինչի վրա, ուստի այլ բան չի մնում, քան, պատի հետ ճակատամարտելով, մտածել լույսեր վառելու մասին: Փախստական ռեյթունը վերաբերում է նաև իր հայրենիքը, իր հայրենի արժեքները տեսնող ու գնահատող քաղաքացուն: Այստեղից հայրենագության քաղաքացիական ուղղվածությունն ընդդեմ ամեն տեսակի գաղափարական կեղծիքի եւ մարդուն ոչնչացնող արժեհամակարգի: Հայրենիքը, որ համեմատվում էր, հիմա դառնում է համեմատելի: Ստեղծվում է մի նոր իրականություն. «Բայց լուրջությունը, // Որ համատարած մի ականջ է լուկ, // Եվ ունի միայն մեկ զգայություն՝ լուկ լսողություն, // Որքան ուռջում է՝ թանձրանում նույնքան, // Ու դառնում կարծես // Սեզ համար մի նոր՝ երկրորդ... հայրենիք. // Հայրենիքի պես չփոխարինվող, // Հայրենիքի պես չփոխարինվող» (2, 64): Այս լուրջությունը ծանր լուրջություն է: Բանաստեղծի գործն այդ լուրջությունը խոսեցնելն է, բայց... գալիս է մի պահ, երբ այդ ծանր լուրջյան առջեւ կանգնած՝ հիշում է նախորդներին եւ իրեն տեսնում որպես նրանց ճակատագրի կրկնվող շարունակությունը՝ կանգնած նոր իրականության այդ ծանր լուրջյան առաջ.

Սենք ծնվեցինք...
 Ու սնվեցինք
 Շատ ավելի «ալելույա-օվսաննա»-ով,
 Քան թե հացով սովորական...
 Երազում մուծն էր վարագուրում
 Կիսաքաղցի մեր աչքերը:
 Փայտոջիւներն էին կծում ու կծոտում

Երազները մեր անմարմին:
 Բայցեւայնպես մերպեսները
 Կարողացան
 Պատիվն իրենց պահել ճերմակ
 Եվ խիղճն իրենց պահել մաքուր՝
 աղի մման,

Որովհետեւ մերպեսները
 Նախընտրում են զրկվել զլիսից,
 Քան խոնարհել զլուխն իրենց
 նրանց առաջ,
 Ովքեր լուրջ-լուրջ փորձ են անում
 Ուղեղ հատել դրամի պես
 Ու միտք դաջել՝ լաթի մման (2, 80):
 Նույն հոգեբանական վիճակը ներքին քաղաքացիական սրացումով ակնհայտ է նաև «Հիվանդություն», «Անտարքերություն», «Աշխարհ... աշխարհ» գործերում: Վերջինում աշխարհի զգայարան դարձած՝ խորապես անձնավորում է ամեն ինչ՝ աշխարհի բախտն ու ճակատագիրը կապելով այն զգացող քաղաքացիական անձի հետ, ով այս դեպքում ես ինքն է.

Ոչ ու փունջ աշխարհ,
 ...Սուտ ու փունջ աշխարհ,
 ...Իսկ չե՞ս վախենում, որ հանկարծ...
 մեռնեմ:
 Ես վախենում եմ, շատ եմ վախենում,
 Բայց ոչ ինձ համար.
 Այլ լուկ թե՛զ համար.
 Իսկ եթե հանկարծ իմ մահով խախտվի
 Համակշռված այս վիճակը քո,
 Ո՞նց պիտի լինես,
 Ի՞նչ պիտի անես:
 Տես, որ իմ մահով թեզ չկործանե՞ս,
 Սուտ ու փունջ աշխարհ,
 Փունջ ու ո՞չ աշխարհ (2, 92-93):

Ակնհայտ է քաղաքացիական սխրանքը: Հայրենիք դարձած լուրջությունը մեկ անգամ եւս խփում է կայծակի պես ու անցնում. «Լուրջությունն է սխալ. // Սեր թեւերն է փետուն: // Իսկ անկեղծ խոսելը... սխալ ու սխալ է» («Սխալ խոսք սխալի մասին»): Ահա այս մտահոգությունները գալիս հասնում են «Անորոշության»: Գիմելով 20-րդ դարին, որ եւ հրեյանական է, եւ հյուլեական՝ խորքային տագնապներ է հայտնում. «Ի՞նչ է սպասվում այս մոլորակին, - // Ի՞նչ պատասխանես: // Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ, - // Ինչպե՞ս իմանաս: // Ի՞նչ է բուննելու այս թշվառ հողին: // Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ... // Կրակն ես ընկել մտքերի ձեռքից: // Ազատում չկա: Եվ պոճոճն չկա» (2, 105): Այսպես մեծ (մոլորակ) եւ փոքր (հայրենիք) համարվում են եւ հակադրվում, որովհետեւ մեծի ճակատագրով է որոշվում փոքրի բախտը, բայց նաև մեծը, այսպես, թե այնպես, իր ընթացքն ու ճակատագիրն ունի, իսկ փոքրի բախտն անորոշ է՝ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ: Ամեն կերպ ելք է որոնում այս փակուղուց, մինչեւ իսկ մտքով թափանցելով այնտեղ, որտեղ ամեն ինչ հասնում է ուժային հեղաշրջման. «Իսկ թե երգը մինչեւ անգամ զենք է դառնում, // Ո՞ր է ձեռքը, որ ինքնակամ զենք է բռնում» («Պահ կասկածի»): Այս քաղաքացիական կերպարը հայրենասիրական տրամադրությունները համակողմանիորեն բացահայտեց պոեմներում:

ՊՈՆՍԵՐԸ: Հայրենիքի գեղարվեստական պատկերն ամբողջական համակարգի վերածվեց «Անլռելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ», «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմներում: Առաջինն ու երկրորդն ունեն երաժշտական կառուցվածք. մեկ Կոմիտասի կյանքն ու ճակատագիրն է, մեկ հայոց բախտի ու պատմության սուր արժարժուններով հյուսված հայոց հայրենիքի բազմաձայն ու բազմալար համանվագը: Յուրաքանչյուր պոեմ ունի իր առանձնահատկությունը, կառուցվածքն ու մեղեդին:

(շարունակելի)
 Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ
 Բանասիրական գիտությունների
 դոկտոր, պրոֆեսոր



Խաչատուր ԱՐՈՎՅԱՆ

«Վերք Հայաստանի»

Գլուխ առաջին (հատված վեպից)

Բարեկենդան էր: Ձիսն էկել, դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզըկա գիշերը է՛նպես էր գետինը սառցորել, որ ամեն մեկը ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ծռծռում, ճրճում էր ու մարդի ջանը սրտացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել: Դենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարհիս բարով մնա ասի: Դուռ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, էստեղ-էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում: Գետերի, առվերի երեսները սառիցը մեկ գագ էկել, հաստացել, իրար վրա դիզվել, էնպես էր ջրի, աղբրի բերնին հուլ տվել, որ մոտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում ըլլում էր ու էլ ետ էստեղ-էնտեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում:

Արեգակը էս առավոտ որ գլուխը քնի տեղիցը ու աղոթարանիցը չի՛ բարձրացրեց ու աչքը աշխարհի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին է՛նպես էր պեծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հենց իմանաս, թե ավագ, գմռութ, յախութ ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլեին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դռնին փռած: Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին է՛նպես էր մեյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ծամփորդի քիթ ու պոռուկը կպցնում, ծաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ծամփից խռկում, սար ու ջուլ քցում, խեղդում կամ քարեքար տալիս:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Չմեռվա իրիկունը

Թարգմանություն Ա.Ս.Պուշկինից

Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գագան. Մին՝ վայրենի սուլում պես-պես, Աղմըկում է տանիքում, Մին՝ ուշացած ծամփորդ, ասես, Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, աղքատ ու հին, Ե՛վ մըթին է, ե՛ւ տըխուր. - Ի՞նչ ես նըստել պատի տակին, Իմ պառավըս, էդպես լուռ: Հոգնե՛լ ես դու փոթորիկի Ոռնոցներից խելագար, Թե՞՞ նիրհում ես քո իլիկի Բըզզոցի տակ միալար:

Արի խմե՛նք, բարի ընկեր, Իմ սեւ, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Սիրտներըս բաց կը լինի: Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ Հավքը ծովի էն ափին, Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գագան: - Արի խմե՛նք, բարի՛ ընկեր Իմ սեւ, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Սիրտներըս բաց կը լինի:

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Ինչքան որ հուր կա իմ սրտում՝ թուրըրը քեզ. Ինչքան կրակ ու վառ խնդում՝ թուրըրը քեզ. Բուր՛րը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝ Դու չմրսես ձմռան ցրտում՝ թուր՛րը քեզ...



Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Առաջին ձյունը

-Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս, Բակն ու դուռը լի Ինչքա՛ն ըսպիտակ Թիթեռ է գալի... Եսքան շատ թիթեռ Չեմ տեսել ես դեռ: - Չէ՛, իմ անուշի՛կ, Թիթեռներ չեն էդ. Թիթեռներն անցան Ծաղիկների հետ: Էդ ձյունն է գալի, Փաթիլն է ձյունի, Որ կարծես սպիտակ Թիթեռնիկ լինի:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վայում է քամին՝ ցուրտ, ձմեռնամուտ, Չոր տերեւները շուրջս է դիզում. - Ո՞վ է իմ սիրտը տրորում անգութ, Սեւ մազերիս մեջ ձերմակ է հյուսում:

Չյունը պատանքով ծամփես է ծածկում, Սիրտս գերեզման՝ մռայլ եւ անհույս, ... Հատ-հատ իմ թաղման զանգերն են գարկում, Ու մի սիրտ վրաս լալիս է քնքուշ...

Համո ՍԱՀՅԱՆ

Չմեռնամուտ

Արագած սարն է ամպի մեջ լռել, Եվ թելերն ամպոտ հողմերը նրա Մի բեկոր ձմեռ դաշտերից բերել Շաղ է տվել թաց մայթերի վրա:

Ցուրտ քամիներն են սուրում սարերից, Բայց իր գարնան մեջ սիրտս այնքան է տաք, Որ չի տարբերում ձյուն է ոտքիս տակ, Թե՞ ծաղիկներ են թափվել ծառերից:

Շուշանիկ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

Փաթիլն ուզեց

Փաթիլն ուզեց ինձի գգվել, գուրգուրել. Իմ թշերը պաղ շուրթերով համբուրել. - Ես գարուն եմ, դու ցուրտ ձմեռ, ա՛յ փաթիլ. Քո համբուրից դու կը դառնաս խեղճ կաթիլ:

Սառ հողի տակ մի օր կը հանգչեն ես արձակ. Իջիր վրաս երբ կամենաս համարձակ. Իմ սեւ թմբից էլ չես հալչի, ա՛յ փաթիլ, Անջերմ, անկյանք ես կը դառնամ խեղճ կաթիլ:

Տիեզերքի տապ ու կիզող համբուրից Որպես ծաղիկ թոշնած ու զուրկ եմ բուրից. Ողջըս դանդաղ պիտի հյուսվի ու հալչի Ոչ մի շրթի համբուրյոն էլ ինձ չի դիպչի...





Վահան ՏԵՐՅԱՆ

Ձմռան գիշեր

Տխրությունս անուշ է, որպես
Յեռավոր, հեռավոր կարկաչուն.
Այնպես մեղմ է իմ սերն ու այնպես
Անուշ է նա իմ սիրտը տանջում:

Չեմ ուզում ոչ անցյալը հիշել,
Ոչ գալիք օրերին նետել հույս,
Յանգիստ է իմ շուրջը եւ գիշեր,
Ու սիրտըս չի տենչում արշալույս:

Անդորրել է աշխարհը բոլոր,
Դուրսը ծյուն է գալիս, փողոցում
Գիշերը եւ հանգիստ է, եւ խոր,
Ու սիրտըս առավոտ չի ուզում:

Մաքուր է իմ հոգին, ու հիմա
Օրհնում եմ վիճակըս երկրային,
Ընդունում եմ սիրով կյանք ու մահ
Ու սիրտըս պարզում եմ աշխարհին...

Անչար է իմ հոգին ու հանգիստ,
Գիշերը անդորր է, դուրսը ծյուն.
Ննջեցե՛ք հավիտյան, վերք ու վիշտ,
Ծավալվի՛ր, լուսեղեն մենություն...

Գուրգեն ԲՈՐՅԱՆ

Ձմռան երգ

Տեսե՛ք, տեսե՛ք,
Ձյուն է գալիս
Փաթիլ-փաթիլ,
Սպիտակ,
Անտառ ու դաշտ,
Փողոց ու տուն
Առել իրեն
Գորգի տակ:

Ջան, ջա՛ն ձմեռ,
Յագար բարով,
Ինչ ուրախ եմք
Մենք այսօր,
Չնագնդի
Ու ձնե մարդ
Մենք կշիներք
Ամեն օր:

Քո նվերը,
Սպիտակ է,
Ճերմակ, փափուկ,
Գեղեցիկ,
Տե՛ս, ինչքան լավ
Պար են բռնել
Օդում՝ ինչպես
Թիթեռնիկ:

Տեսե՛ք, տեսե՛ք,
Ձյուն է գալիս
Փաթիլ-փաթիլ,
Սպիտակ,
Անտառ ու դաշտ,
Փողոց ու տուն
Առել իրեն
Գորգի տակ:

Վահան ԹԵՔԵՅԱՆ

Ձյունը

Օ՛հ, հանդիպո՛ւմըս քեզի, ձյունին ներքեւ, այն գիշեր,
Թեթեւ ու լուռ՝ երկինքն իջնող ձյունին, հարսի պես...
Տարի մ'ամբողջ ես փախեր էի քեզմե, քեզ սիրեր,
Ու միայն ձյունը հիմա զիս կը մղեր դեպի քեզ...

Որքա՛ն գորով, զմայլանք, արգահատանք ու տենչանք
Քեզի համար տակավի՛ն հոգիս մեջ ունեի.
Որքա՛ն հրձվանք խաբուսիկ եւ իրական տառապանք՝
Արթնության մեջ ու քրնի քեզմե եկած էր ինձի...

Եվ հիմա դո՛ւն էիր, դո՛ւն որ ձյունին տակ, ինձի հետ
Կը խոսեիր շունչ շունչի, ու կուտայիր ինձ վաղվան
Յույսը գարուն երկնքին, պարտեզներուն ծաղկավետ...

-Եվ դողալով գացի տուն... Բայց իրոք դո՛ւն էիր ան.
Ձայնդ ու խոստումը՝ դ՛ի նչպե՛ս զքեզ տարբեր կ'ընեին.
Ստուգության մեջ ինչպե՛ս կ'որոնեի հույսս հին...



Մատթեոս ԶԱՐԻՖՅԱՆ

Կը ձյունե

Յոգիս կեսգիշեր մ'է ձմեռային,
Ուրկե տակավին երկինք կընային
Յիվանդ ու անտեր
Քանի մը լապտեր...

Բայց ալ կը ձյունե՛ ճամբուն վրա Յույսին
Ուր հոգի տվող սերեր կը մըսին:
Սեւ ճամբորդ մ'հեռվեն
Կուգա համորեն...

Պարույր ՍԵՎԱԿ

Վառարանի առաջ

Իսկ քարածո՛ւխը...


Երբ նա վառվում է
Չմեռվա ցրտին,
Յին վառարանում,
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն,-

Լինում է այնպես,
Որ՝ մեկ էլ տեսար՝
Սոսափն եմ լսում ա՛յն անտառների,
Որոնք բյուրհագար տարիներ հետո
Այս քարածուխին պիտի վերածվեն.
Եվ գագամների ոռնոցն եմ լսում
Այդ անտառների անեզրության մեջ.

Եվ ձայնը նաեւ
Իմ նախա-նախա-նախապապերի,
Որ դրս են անում այդ անտառներում,
Որ մերկանդամ են
Եվ ունեն դեռ պոչ,

Բայց անկարող են այլերս ապրել
Լռին խավարում կույր անձավների,
Ինչքան էլ դրանք թվան ապահով:

Ու հասկանում եմ,
Որ սերվել եմ ես
Դե՛ռ այն ժամանակ, հե՛նց այն ժամանակ...



Գուրգեն ՄԱՅԱՐԻ

Ձմեռ

Թափվի՛ր, ճերմակ, թափվի՛ր, ձյուն,
Թափվիր իմ սրտում,
Ծածկիր անտառ ու կածան,
Ջրադացը հին, հյուղ ու ծառ,
Գլուղակն իմ սրտում:

Թափվիր դանդաղ ու թեթեւ,
Այսպես թափվում էիր դու,
Երբ ես ջահել էի դեռ
Յույզերով հորդուն:-
Այսպես թափվում ես հիմի,
Յանդիսավոր ու հանգիստ,
Ասես պարիսպներին հին
Յայկական վանքի:

Թափվիր, փռվիր իմ սրտում,
Ճերմա՛կ երագ, ճերմա՛կ ձյուն...

Սրբոց Վարդանանց

սկիզբը՝ էջ 1

Նախորդող երեքշաբթի օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց **Ղեւոնդյանց** ոգեկոչման օրը: Այս անվան տակ ճանաչվում են այն հոգեւորականները, ովքեր Վարդանանց պատերազմից հետո, Ատրորմիզդ մարզպանի դրոշմով, պարսից Հարզկերտ Բ-ի հրամանով ձերբակալվում են՝ Հայոց երկիրն ապստամբական նոր խլրտուններից զերծ պահելու համար, եւ տարվում Ապար աշխարհի Նյուշապուհ բերդը: Այնտեղ նրանց առաջարկվում է ընդունել մագդեգական կրոնը՝ իրենց կյանքը փրկելու համար: Ղեւոնդյանք մերժում են այդ առաջարկը եւ նահատակվում: Պատմությունը հիշում է նրանց անունները. **Հովսէփ կաթողիկոս, Սահակ Եպիսկոպոս, Ղեւոնդ երեց, Մուշե քահանա, Արշեն երեց, Քաջաջ սարկավագ:** Սրանց հետ էին նաեւ **Աբրահամ եւ Խորեն երեցները**, որոնց ականջները միայն կտրելով ազատ են արձակում՝ տարագրության մեջ ապրելու պայմանով: Որոշ ժամանակ անց, չղիմանալով Ասորեստանի տոթակեզ եղանակներին, Խորենը մահանում է: Աբրահամը հետագայում թույլտվություն է ստանում հայրենիք վերադառնալու եւ ձեռնադրվում է Բզունիքի Եպիսկոպոս: Նրան է վերագրվում ասորական հայտնի «Վկայք Արեւելից» երկի հայերեն թարգմանությունը:

... **428թ.** Հայաստանում վերացվեց **Արշակունյաց** թագավորությունը: Հայաստանի՝ պարսկական տիրապետությանն անցած մասը դարձավ **մարզպանություն**, եւ մարզպան նշանակվեց **Վասակ Սյունին**: Պարսից թագավոր **Հազկերտը՝ Վռամի** որդին, խիստ մոլեռանդ էր իրենց կրոնի օրենքները պահելու հարցում եւ 449թ. մի հրովարտակ է հրապարակում, որով տերության սահմաններում գտնվող բոլոր հպատակներին պարտադրվում է **գրադաշտական** կրոնը (կրակապաշտություն):

Այս ընթացքում հայ նախարարները, սպարապետ **Վարդան Մամիկոնյանի** եւ կաթողիկոս **Հովսէփ Հողոցմեցու** գլխավորությամբ, Արտաշատում ժողով են գումարում, որտեղ Հազկերտին պատասխան են գրում. «**Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ո՛չ էլ որեւէ այլ դառն հարված: Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքում են, եւ մեր մարմինները քո առաջ են, քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես: Եթե այս հավատի մեջ թողնես, ո՛չ երկրի վրա ուրիշ տեր կընդունենք քո փոխարեն եւ ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստված՝ Հիսուս Քրիստոսի փոխարեն, Որից բացի ուրիշ Աստված չկա»:**

Պատասխանը խիստ զայրացնում է Հազկերտին, եւ 451թ. գարնանը պարսկական զորքը, **Մուշկան Նյուսալավուրտի** գլխավորությամբ, մտնում է Հայաստան եւ հասնում Արտազ գավառ՝ բանակ դնելով **Տղմուտ** գետի աջ ափին: Պարսկական զորքը 200 հազար էր՝ հայկականից 3 անգամ ավելի: **Մայիսի 25-ին** զորքերը պատրաստվում են վճռական ճակատամարտի: Հոգեւորականները մկրտում են չմկրտված անձանց: Բոլորը **Սուրբ Ավետարանի** վրա եր-



դումով միաբանվում են, որով Հայոց բանակատեղին նմանվում է շարժական եկեղեցու՝ **Սուրբ Ավագանով, Ավետարաններով, խաչերով, սրբերի նշխարներով եւ անգամ եկեղեցական մկրտատեղիներով՝ կաթողիկոսից մինչեւ սաղմոսասաց: Մայիսի 26-ին** սկսվում է ճակատամարտը: **Ավարայրում** հերոսաբար մարտնչելուց հետո իր զինվորների հետ ընկնում է **Վարդանը** եւ նրա հետ երեւելի նախարարներ՝ իրենց տոհմակից ազնվականներով՝ **296** հոգի...

Հայ Եկեղեցին երախտագիտությամբ սրբացրել է **Ավարայրի 1036** նահատակներին՝ **Վարդան Ջորավարի** գլխավորությամբ: Ցավոք սրտի, պատմությունը չի պահել բոլորի անունները: Հայտնի են միայն 9 զորականները.

1. **Քաջ Վարդան Մամիկոնյան՝ 133** համհարզներով,
2. **Կորովի Խորեն Խոռխոռունի՝ 19** ընկերներով,
3. **Արի Արտակ Պալունի՝ 57** ընկերներով,
4. **Ջարմանալի Տաճատ Գնթունի՝ 19** ընկերներով,

5. **Իմաստուն Հմայակ Դիմաքսյան՝ 22** ընկերներով,
6. **Հրաչակերտ Ներսես Քաջբերունի՝ 7** ընկերներով,
7. **Մանուկ Վահան Գնունի՝ 3** ընկերներով,
8. **Արդար Արսեն Ընծայունի՝ 7** ընկերներով,
9. **Առաջադեմ Գարեգին Սրվանձտյանց՝ 2** եղբայրներով եւ **18** ընկերներով:

Վարդանանց քաջերին **Սուրբ Ներսես Շնորհալի** հայրապետը ձոնել է «*Նորահրաշ*» շարականը՝ ամեն քառատող սկսելով նահատակ մի իշխանի անունով:

Ճակատամարտին մասնակից էին նաեւ հոգեւորականները, ովքեր իրենց անմնացորդ ծառայությունը մատուցեցին Հայ Եկեղեցու, հավատքի ու հայրենիքի պաշտպանությանը: Նրանցից էին **Սուրբ Ղեւոնդյանները: Սուրբ Ղեւոնդյանց մարտիրոսությունը** տեղի ունեցավ **Սուրբ Վարդանանց նահատակությունից** երեք տարի երկու ամիս հետո, բայց եկեղեցական տոնացույցի մեջ սկզբում է դրված **Ղեւոնդյանց տոնը՝** իբրեւ **Վարդանանց պատերազմի** զաղափարախոս նախապատրաստողների:

Բուն բարեկենդան

«*Բարեկենդան*» նշանակում է բարի կենդանություն, ուրախություն, խրախճանք, առատ ուտելիքներով վայելքի օր: Գլխավոր շաբաթապահներին նախորդող կիրակի օրը կոչվում է բարեկենդան, եւ այդ առթիվ թույլատրվում է մի փոքր ավելի ուտել: Սակայն բարեկենդանների մեջ հատկանշական է Մեծ Պահքի նախընթաց կիրակի օրը (այս տարի՝ **փետրվարի 11-ին**), որ կոչվում է Բուն Բարեկենդան: Այս օրը մարդիկ վայելում են առատ ուտելիք՝ ճոխ սեղաններ պատրաստելով ու զանազան խրախճանքներ կազմակերպելով: Արեւմուտքում Բարեկենդանը՝ իրենց լեզվով «*Կարնավալը*»-ը, նշվում է բացառիկ շուքով եւ հանդիսությամբ: Տեղի են ունենում զանազան տողանցքներ ու ցուցադրություններ, ինչպես նաեւ՝ ժողովրդական խրախճանք:

Մեծ պահքի շրջան

Հայ Եկեղեցու ծիսակարգի համաձայն՝ Բուն Բարեկենդանին հաջորդող երկուշաբթից (այս տարի՝ **փետրվարի 12-ից**) սկսվում է Մեծ Պահքի շրջանը: Այն տևում է քառասուն օր՝ մինչեւ Ծաղկազարդի կիրակիին (այս տարի՝ **մարտի 24-ին**) նախորդող շաբաթ օրը, որին հաջորդում է պահոց մի շրջան եւս՝ Ավագ Շաբաթվա Պահքը, որի ընթացքում Եկեղեցին պատրաստում է հավատացյալ ժողովրդին արժանավորապես եւ մեծագույն երկյուղածությամբ մոտենալու Սուրբ Հաղորդության Սեղանին՝ հռչակելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսը (այս տարի՝ **մարտի 31-ին**): Պահքի այս շրջանում սահմանափակում է դրվում սննդի որոշ տեսակների վրա, հիմնականում՝ կենդանական ծագում ունեցող, փոխարինելով այն «*Ճաշի*» այլ տեսակներով՝ ավելի հարուստ ու սննդարար, անանց ու պտղաբերող, որոնք ավետարանական պատգամներն ու առակներն են: Մեծ Պահքի շրջանի գրեթե բոլոր կիրակիներին, ըստ Հայոց Տոնացույցի, ավել տարանական առակներ են ընթերցվում, որոնք քրիստոնյայի համար զարթուցիչ կոչմանի դեր պիտի կատարեն: Այդ կոչմանը Եկեղեցու զանգերի մասն հավատացյալներին հրավիրում է արթուն կյանքի: Այս շրջանում է, որ յուրաքանչյուր ոք փորձում է զղջումով ու ապաշխարությամբ մեղքից հեռանալ ու մաքրվել եւ «*իմաստուն կույսերի նման*» միշտ պատրաստ լինել: Լեռան քարոզում Քրիստոս պատվիրում է «*կատարյալ լինել, ինչպես մեր երկնավոր Հայրն է կատարյալ*» (Մատթ. 5:48): Պահքի շրջանն այդ առումով նաեւ կատարելության, մերքին ներդաշնակության տանող մի շրջան է. այն, ինչ կորցրեցին մեր նախածնողները Եղեմական պարտեզում, Քրիստոս մեզ վերադարձրեց: Աստծո պատկերն ու նմանությունն այդ կատարելություններն են, որոնց ձգտելով՝ քրիստոնյան կարող է Վերջին փողի հնչելու ժամանակ Պողոս առաքյալի խոսքերով ասել. «*Բարի պատերազմ մղեցի, ավարտեցի կյանքիս ընթացքը, պահեցի հավատը: Այսուհետ ինձ մնում է միայն սպասել արդարության պսակին, որ Տերը՝ արդար Դատավորը, իբրեւ հատուցում, ինձ կտա դատաստանի օրը: Եվ կտա ոչ միայն ինձ, այլ նաեւ բոլոր նրանց, ովքեր սիրով սպասում են Տիրոջ հայտնվելուն*» (Բ Տին. 4:7-8): Ամեն մի հավատացյալի համար պահքի շրջանը մեղքի կրակոտ մետերից ազատվելու առիթ է: Ինչպես Ադամը մեղանչելուց հետո չխոստովանեց ու պատուհասից չազատվեց, այնպես էլ ամեն ոք, եթե մեղանչելուց հետո չխոնարհեցնի իր անձը՝ խոստովանելով իր մեղքերը, դրանց պատուհասներից չի խուսափի: Պահքով եւ աղոթքով քրիստոնյան ի գորու է չարի փորձություններին դիմանալու եւ հաղթանակած դուրս գալու:

